Հավելված N 1
ՀՀ կառավարության 2021 թվականի
օգոստոսի 6-ի N 1297 - Ն որոշման

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԻ, ՀԱՆՐԱԳԻՐԸ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆՈՒՄ ԳՐԱՆՑԵԼՈՒ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Պետական և տեղական ինքնակառավարման մարմինները վարում են էլեկտրոնային գրանցամատյան, որտեղ մուտքագրվում են ներկայացված հանրագրերը:

2. Հանրագիրը ենթակա է գրանցման պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից վարվող հանրագրերի էլեկտրոնային գրանցամատյանում հանրագիրն ստանալու օրը:

3. Թղթային եղանակով ներկայացված հանրագրերը հանրագրերի էլեկտրոնային գրանցամատյանում մուտքագրվում են պետական և տեղական ինքնակառավարման մարմնի կողմից, իսկ էլեկտրոնային հարթակում ներկայացված հանրագրերը՝ ինքնաշխատ եղանակով:

4. Եթե անհատական ընդունելության ժամանակ անձի հնչեցրած առաջարկությունը «Հանրագրերի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով և դեպքերում դիտարկվում է որպես հանրագիր, ապա այն մուտքագրվում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից վարվող հանրագրերի էլեկտրոնային գրանցամատյան:

5. Անանուն հանրագիրը, ինչպես նաև այն հանրագիրը, որում նշված չէ հետադարձ կապի վերաբերյալ որևէ տեղեկություն, ենթակա չէ գրանցման և քննարկման:

6. Հանրագրերի էլեկտրոնային գրանցամատյանում նշվում են՝

1) հանրագրի վերնագիրը.

2) ֆիզիկական անձի դեպքում՝ հանրագիրը ներկայացնող ֆիզիկական անձի անունը, ազգանունը, բնակության կամ հաշվառման վայրի հասցեն, կապի միջոցի վերաբերյալ տվյալներ.

3) իրավաբանական անձի դեպքում՝ իրավաբանական անձի անվանումը, գտնվելու վայրի հասցեն, կապի միջոցի վերաբերյալ տվյալներ.

4) կոլեկտիվ հանրագրի դեպքում՝ նաև հանրագիր ներկայացրած այն պատասխանատու անձը, որը լիազորված է հանդես գալու հանրագիրը ներկայացնողների անունից.

5) հանրագիրը ներկայացուցչի միջոցով ներկայացվելու դեպքում՝ նրա անունը, ազգանունը, բնակության կամ հաշվառման կամ գործունեության վայրի հասցեն, կապի միջոցի վերաբերյալ տվյալներ.

6) էլեկտրոնային հարթակում կոլեկտիվ հանրագիր ներկայացնելու դեպքում՝ գլխավոր նախաձեռնողի անունը, ազգանունը կամ անվանումը, բնակության կամ հաշվառման կամ գտնվելու վայրի հասցեն, էլեկտրոնային փոստի հասցեն.

7) էլեկտրոնային հարթակում կոլեկտիվ հանրագրին միանալու դեպքում՝ հանրագրի աջակիցների անունը, ազգանունը կամ անվանումը, էլեկտրոնային փոստի հասցեն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

09.08.2021
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ